<u>ՁԵՎ N 2</u>

Կադաստրի կոմիտե

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Ինտեգրված կադաստրի ստեղծում	1.2 Ինտեգրված կադաստրի ոլորտային բաղադրիչների ստեղծում և համակարգի ամբողջական գործարկում՝ ըստ ոլորտների պատրաստվածության	Համակարգի ամբողջական գործարկման նպատակով դեռևս 2024 թվականի սկզբից մի շարք գերատեսչությունների հետ համատեղ Կադաստրի կոմիտեում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են տարածական տվյալների ինտեգրումը ազգային գեոպորտալին սահմանված կարգով իրականացնելու գործընթացի վերաբերյալ հարցեր, առցանց քարտեզագրական ծառայություններ (WMS, WFS, WCS) միջոցով իրականացվել է թեմատիկ շերտերի ինտեգրում ազգային գեոպորտալին: Արդյունքում ներկայումս ազգային գեոպորտալում արտացոլվում են Շրջակա միջավայրի նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Ներքին		

			գործերի նախարարության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ավելի քան 20 թեմատիկ քարտեզագրական շերտերը (արգելավայրեր, ազգային պարկեր, բնության հուշարձաններ, ճանապարհներ, հանքային ջրեր, հիդրոտեխնիկական ենթակառուցվածքներ, էլեկտրահաղորդման գծեր, սողանքներ, ձնահյուսքեր, բջջային կապի ծածկույթներ և այլն): Նշենք, որ այս պահին տվյալները գեոպորտալում արտացոլված են տարածական պատկերմամբ, սակայն ապագայում կապահովվի նաև ատրիբուտային տվյալների հասանելիությունը: Թեմատիկ տարածական տվյալների ինտեգրման բնականոն ընթացքը ապահովելու համար կոմիտեի մասնագետները պարբերաբար կազմակերպում կամ մասնակցում են այլ գերատեսչությունների կողմից կազմակերպվող քննարկումներին: Կարևորենք նաև ինտեգրված կադաստրի խորհրդակցական մարմնի հետ պարբերաբար կազմակերպվող նիստերը, որտեղ խորհրդակցական մարմնի անդամները ներկայացնում են իրենց կողմից իրականացված աշխատանքները, կիսում իրենց գաղափարները և բարձրաձայնում հուզող հարցերը: Հարկ ենք համարում նշել նաև, որ 2024 թվականին Ասիական զարգացման բանկի դրամաշնորհի շրջանակում մեկնարկել են նոր բազմաֆունկցիոնալ ազգային գեոպորտալի ներդրման աշխատանքները, որոնք կշարունակվեն մինչև 2025 թվականի ավարտը: Նոր հարթակը ունենալու է ոլորտային թեմատիկ տարածական տվյալների ինտեգրման և		

			փոխգործելիության ապահովման, ինչպես նաև գործիքակազմի լայն հնարավորություններ:		
		1.3 Ազգային գեոպորտալի տեխնիկական առաջադրանքի կազմում, ծրագրի ձեռքբերում և գործարկում	Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարվել է մրցույթ գեոպորտալի արդիականացման համար: Գործող գեոպորտալի միջոցով կատարվել են հետևյալ աշխատանքները. Օրենքով վերապահված լիազորությունները կատարելու համար ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգի միջոցով բազային բաղադրիչների հասանելիություն է ապահովվել հետևյալ պետական մարմիններին՝ • Վարչապետի աշխատակազմ, • Առողջապահության նախարարություն, • Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, • Շրջակա միջավայրի նախարարություն, • Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, • Էկոնոմիկայի նախարարություն, • Պաշտպանության նախարարություն, • Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, • Ներքին գործերի նախարարություն, • Պետական վերահսկողական ծառայություն, • Ազգային անվտանգության ծառայություն, • Քննչական կոմիտե, • Քաղաքաշինության կոմիտե, • Վիճակագրական կոմիտե, • Ջրային կոմիտե, • Պետական գույքի կառավարման կոմիտե, • Հակակոռուպցիոն կոմիտե • Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին,		

			• Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին, • Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, • Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, • Արագածոտնի մարզպետարան, • Արարատի մարզպետարան, • Լոռու մարզպետարան, • Շիրակի մարզպետարան, • Սյունիքի մարզպետարան: Վերոնշյալ ցանկը մշտապես փոփոխվում է: Ըստ անհրաժեշտության համապատասխան գրությամբ դիմելու դեպքում ծառայությունը ակտիվացվում է պետական մարմինների համար, կամ ավելացվում են նոր օգտվողներ: Ներկայումս հարթակում պետական մարմիններից գրանցված են շուրջ 118 օգտվողներ: Ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգը պարբերաբար արդիականացվում է, և ավելացվում են նոր քարտեզագրական շերտեր ու համապատասխան հատկանիշային տվյալներ, կատարելագործվում են որոնման հնարավորությունները, հաշվետվությունների արտահանման տեսակները: Կադաստրի կոմիտեի աշխատակիցները տեխնիկական աջակցություն են ցուցաբերում օգտվողներին, ինչպես նաև ընդունում են վերջիններիս կողմից ներկայացվող առաջարկությունները, որոնք ներդրվում են ծառայության որակի բարելավման համար: «OGS WMS» ծառայության կիրառության միջոցով maparmenia.am հարթակը կապակցվել է Տարածքային կառավարման և		

			ենթակառուցվածքների նախարարության, Պետական գույքի կառավարման կոմիտեի, Ներքին գործերի նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տեղեկատվական համակարգերին և այժմ տարածական տվյալները արտապատկերվում են հարթակում: Տվյալների կազմը անընդհատ ավելացվում է: Հասանելի են հետևյալ շերտերի խմբերը՝ • Պետական գույք ❖ Հողամաս, ❖ Շենք, • Բջջային կապ ❖ Բջջային ծածկույթների վերաբերյալ տվյալներ՝ ըստ օպերատորների, • Շրջակա միջավայր ❖ Բնության հուշարձաններ, ❖ Պետական արգելոցներ, ❖ Արգելավայրեր, ❖ Ազգային պարկեր, • ՏԿԵՆ ❖ Ճանապարհներ, ❖ Հանքային ջրեր, ❖ 35 կՎ, ❖ 6 և 10 կՎ լարման էլեկտրահաղորդման գծեր, ❖ Սպասարկող ընկերություններ, ❖ Ծածկի տեսակներ, ❖ Շին. միջամտություններ, ❖ Վեոլիա Ջուր, • ՆԳՆ ❖ Ձնահյուս, ❖ Սողանք,		

			❖ Հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորում, ❖ Մարմարիկ միկրոշրջանացում, ❖ Սառցակալում:		
		1.5 Համակարգչային սերվերի լրակազմի վարձակալություն	Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թվականի հունիսի 28-ի և 29-ի (N ԽԱ/13-2024 արձանագրություն), ինչպես նաև սեպտեմբերի 27-ի (N ԽԱ/10-2024 արձանագրություն) նիստերում որոշվել է Կադաստրի կոմիտեի սերվերային համակարգերի արդիականացման համար հրաժարվել նոր սերվերների գնումից և իրականացնել սերվերի լրակազմի վարձակալություն: Հայտնում ենք, որ նախատեսված միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կազմվել է «Համակարգչային սերվերի լրակազմի վարձակալություն՝ 1 տարի» տեխնիկական բնութագիրը, կազմակերպվել է գնման ընթացակարգ, և շահող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր:		
3	Հայաստանի Հանրապետության տարածքի երկրատեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացում	3.2 Երկրատեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ	Նախատեսված աշխատանքների իրականացման շրջանակներում ազգային գեոպորտալ մուտքագրելու համար իրականացվել են ՀՀ Արարատի մարզի՝ շուրջ 200,000 հա մակերեսով ռելիեֆ քարտեզագրական բազային շերտի կամերալ պայմաններում մշակման և ստանդարտացման աշխատանքներ, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզի արդեն իսկ թվայնացված բազային քարտեզագրական շերտերի (մակերևութային ջրեր, ռելիեֆ և տրանսպորտային ցանց) ստանդարտացման աշխատանքներ՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում		

			բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխան, ազգային գեոպորտալ մուտքագրելու նպատակով:		
4	Կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքների իրականացում	4.2 ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքներ	Կարևորելով կադաստրային քարտեզներում ուղղման աշխատանքները՝ արդեն իսկ ուղղված են 500 բնակավայրերի կադաստրային քարտեզներ, որից 155-ը իրականացվել է 2024 թվականին: 2024 թվականի ընթացքում՝ շուրջ 20000 միավոր գույքեր նույնականցվել և ըստ անհրաժեշտության տեղադրվել են կադաստրային քարտեզներում:		
		4.3 ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կետերի դիտարկում	Անհրաժեշտություն չի առաջացել		
7	Թեմատիկ ատլասների ստեղծում	7.1 Նոր ձևաչափով՝ տպագիր, բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլաս	Նախատեսված թեմատիկ ատլասների ստեղծման աշխատանքների իրականացման շրջանակներում կատարվել են «Աշխարհի երկրների տեղեկատու ատլաս»-ից 80 էջ (80 երկիր) աշխարհագրական հիմքերի նախապատրաստման, քարտեզների բովանդակության մշակման, տեքստերի մշակման, ինչպես նաև ձևավորման, քարտեզագրական նյութերի խմբագրման և սրբագրման աշխատանքներ: Հայտնում ենք նաև, որ համակարգվում են ՀՀ վարչապետի 2024 թվականի հուլիսի 29-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N 702-Ա որոշմամբ նախատեսված ՀՀ նոր		

			«Պետական ատլաս»-ի ստեղծման աշխատանքները: Ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ աշխատանքային խմբի անդամների կողմից առաջարկվելու է ատլասի նախնական բովանդակությունը: Օգտատերերը, մուտք գործելով հարթակ, հնարավորություն ունեն քվեարկելու՝ համապատասխան թեմատիկ քարտեզը ատլասում ներառելու համար ինչպես նաև առաջարկելու նոր թեմաներ և թեմատիկ քարտեզներ:		
10	Առցանց, ինքնաշխատ, անշարժ գույքի կադաստրի ներդրում	10.3 Էլեկտրոնային համակարգի տեքստային տվյալների բազայում գործող և դադարած իրավունքների սուբյեկտների ճշգրտում և նույնականացում, այդ թվում՝ համայնքներում և այլ պետական մարմիններում առկա տեղեկատվության հիման վրա	Անշարժ գույքի միավորներին կապակցված 5,349,723 ֆիզիկական սուբյեկտներից առանձնացվել է շուրջ 2,209,000 չնույնականացված սուբյեկտ: Նույնականացման աշխատանքների արդյունքում կատարվել է 1,647,000 սուբյեկտի նույնականացում (ՀԾՀ, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս և տարի): Շուրջ 562,485 չնույնականացված սուբյեկտների տվյալներ, որոնք կազմում են ընդհանուրի 10.5 %-ը, ներկայացվել են համապատասխան համայնքներին, և 25 համայնքների կողմից ստացվել են պատասխաններ, համաձայն որոնց՝ չնույնականացված սուբյեկտների 5 %-ի չափով կատարվել է լրացուցիչ տվյալների մուտքագրում (ծննդյան տարի, օր, ամիս և այլն), իսկ մնացած զգալի մասը կա՛մ գտնվում են ՀՀ տարածքից դուրս, կա՛մ մահացել են մինչև 2008 թվականը (այդ տվյալները բացակայում են թե՛ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգում, թե՛ ՀՀ ընտրողների ռեգիստրում, թե՛ Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում), և տվյալների բացակայության		

			պատճառով հնարավոր չի եղել իրականացնել նույնականացման աշխատանքներ: Զուգահեռ կատարվել են նաև նույնականացման աշխատանքներ իրավաբանական անձանց, մասնավորապես խոշորացված համայնքների և ֆինանսական կազմակերպությունների (բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն) անվամբ գրանցված գույքերի (որոշ դեպքերում՝ 3 անգամ ՀՎՀՀ-ների փոփոխության առկայությամբ) մասով: Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Կադաստրի կոմիտե» բաժնի 10.3-րդ կետով նախատեսվել է իրականացնել էլեկտրոնային համակարգի տեքստային տվյալների բազայում գործող և դադարած իրավունքների սուբյեկտների ճշգրտման և նույնականացման աշխատանքներ, որոնց համար կիրառվել են բոլոր հասանելի տեղեկատվական համակարգերը, այդ թվում՝ համապատասխան ՀՀ համայնքներում առկա տվյալների միջոցով, և վերջնական արդյունքում նախատեսված բոլոր աշխատանքները կատարված են: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ չնույնականացված սուբյեկտների տվյալները ճշգրտելու համար աշխատանքները կրում են շարունակական բնույթ (օրինակ՝ առցանց ծառայություններից օգտվող պետական կառավարման մարմինների կամ e-cadastre.am հարթակից օգտվողների կողմից ներկայացված իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումներում առկա տվյալների կամ այդ դիմումներով		

			ներկայացված իրավահաստատող փաստաթղթերի հիման վրա):		
		10.4 Առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակների ընդլայնում՝ նոր տեղեկատվական փաթեթների մշակում, տեղեկատվության որոնում առցանց վարվող կադաստրային քարտեզներից	Ավարտվել են ՀՀ բակավայրերի կադաստրային քարտեզները առցանց քարտեզագրական միջավայր մուտքագրելու աշխատանքները: Անշարժ գույքի միավորների տեքստային տվյալները կապակցվել են կադաստրային քարեզներին: Արդյունքում վերանայվել են տեղեկատվական համակարգի գործընթացները և տեքստային բազայում կատարվում է տվյալների ինքնաշխատ մուտքագրում: Կադաստրային քարտեզում նշելով համապատասխան տարածքը՝ հնարավոր է ստանալ ամբողջական տեղեկատվություն գույքերի վերաբերյալ: Էլեկտրոնային ծառայությունների մատուցման (e-cadastre.am) հարթակի «Քարտեզը» բաժնում ներդրվել է գործիք՝ կադաստրային քարտեզներից հատվածի ինքնաշխատ եղանակով ստանալու համար: «OGC WFS» ծառայության կիրառության միջոցով կազմակերպվել է փողոցների շերտերի խմբագրում, տարատեսակ համեմատական վերլուծությունների կատարում, առաջարկվող հասցեների մուտքագրում: e-cadastre.am հարթակում ներդրվել է անձնական գրասենյակը: Անձնական գրասենյակի միջոցով հարթակում գրանցված օգտատերերը անձի խիստ նույնականացման համակարգերի միջոցով կարող են դիտել իրենց անվամբ գրանցված անշարժ գույքերը և պարզեցված եղանակով կատարել դիմումների մուտքագրումները, ինչպես նաև տեսնել անհրաժեշտ տեղեկատվությունը այդ միավորների վերաբերյալ:		

			Վերանայվել և ընդլայնվել են «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին տրամադրված համակարգերի փոխգործելիության համար նախատեսված վեբ ծառայությունները: Կադաստրի կոմիտեի տվյալների բազային փոխկապված մարմիններն են՝ 1. Ներքին գործերի նախարարություն, 2. Պաշտպանության նախարարություն, 3. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 4. Արդարադատության նախարարություն, 5. Առողջապահության նախարարություն, 6. Ազգային անվտանգության ծառայություն, 7. Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, 8. Քրեակատարողական ծառայություն, 9. Պրոբացիայի ծառայություն, 10. Պետական վերահսկողական ծառայություն, 11. Դատախազություն, 12. Հակակոռուպցիոն կոմիտե, 13. Քննչական կոմիտե, 14. Պետական եկամուտների կոմիտե, 15. Քաղաքաշինության կոմիտե, 16. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, 17. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով 18. Դատական դեպարտամենտ 19. Կենտրոնական բանկ: Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և նոտարների կողմից իրավահաստատող փաստաթղթերը, ինչպես նաև սահմանափակումների վերաբերյալ որոշումները Կադաստրի կոմիտե էլեկտրոնային		

			համակարգի միջոցով ներկայացնելու պահանջը ապահովելու համար ներդրվել է docs.e-cadastre.am համակարգը:		
12	Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային բարեփոխումների իրականացում	12.2 «Սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների (համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման:Օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնի ստեղծում	2024 թվականի մայիսի 31-ին ընդունվել է ՀՀ վարչապետի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 520-Լ որոշումը (այսուհետ՝ Որոշում): Որոշմամբ 2024 թվականի նոյեմբերի 1-ից դադարեցվել է «Ճամբարակ», «Բերդ» և «Նոյեմբերյան» սպասարկման գրասենյակների գործունեությունը, ստեղծվել են «Շիրակի խորհրդատվական կենտրոն», «Լոռու խորհրդատվական կենտրոն» և «Սյունիքի խորհրդատվական կենտրոն» ստորաբաժանումները, որոնց հիմնական նպատակը քաղաքացիներին խորհրդատվության տրամադրումն է՝ Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից մատուցվող ծառայությունների, կադաստրային քարտեզներում սխալների ուղղում կատարելու, իրավունքի պետական գրանցման մերժումների, կասեցումների վերաբերյալ: Միաժամանակ Լոռու մարզային ստորաբաժանումը միացվել է Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը: Որոշման պահանջների համաձայն՝ նախատեսվում է 2025 թվականի փետրվարի 1-ից «Ստեփանավան», «Սպիտակ», «Վանաձոր», «Ալավերդի» սպասարկման գրասենյակները միացնել «Լոռու խորհրդատվական կենտրոն»-ին, «Կապան» սպասարկման գրասենյակը՝ «Սյունիքի խորհրդատվական կենտրոն»-ին, «Գյումրի» և «Արթիկ» սպասարկման գրասենյակները՝		

			«Շիրակի խորհրդատվական կենտրոն»-ին, Սյունիքի մարզային ստորաժանումը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը, իսկ 2025 թվականի հունիսի 1-ից Շիրակի մարզային ստորաբաժանումը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը:		
13	Անշարժ գույքի շուկայի բարելավում և զարգացում	13.2 Անշարժ գույքի գործակալների (բրոքերներ) գործունեությունը կարգավորող օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում		Միջոցառմամբ նախատեսված «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի նախագծի փաթեթը Կադաստրի կոմիտեի կողմից մշակվել, շրջանառվել և 2024 թվականի փետրվարի 14-ի N ՍԹ/2413-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Այնուհետև ՀՀ վարչապետի աշխատակազմի 2024 թվականի մարտի 22-ի N 02/12.63/10540-2024 գրությամբ ներկայված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակման արդյունքում 2024 թվականի մայիսի 22-ի N ՍԹ/8278-2024 և 2024 թվականի մայիսի 31-ին N ՍԹ/8697-2024 գրություններով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Այնուհետև 2024 թվականի հուլիսի 11-ի N ՍԹ/11012-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակ՝ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի նիստում	

				քննարկելու նպատակով: Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 8-ին տեղի ունեցած նիստի քննարկումների ընթացքում հնչեցված առաջարկությունների հիման վրա Նախագծի լրամշակված փաթեթը 2024 թվականի դեկտեմբերի 18-ի N ՍԹ/21507-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2024 թվականի դեկտեմբերի 23-ին Նախագծի փաթեթը քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստում: Նիստի քննարկումների և ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագծի փաթեթը լրամշակվել և 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N ՍԹ/22376-2024 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը: Նախագծի փաթեթը լրամշակվել և 2025 թվականի հունվարի 24-ի N ՍԹ/1472-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննության, որի վերաբերյալ 2025 հունվարի 24-ի N ՍԹ/1474-2025 գրությամբ	

				հայտնվել է ՀՀ վարչապետի աշխատակազմին՝ կից ներկայացնելով Նախագծի լրամշակված փաթեթը:	
16	Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում	16.1 «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունում	«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի 2024 թվականի հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Կադաստրի կոմիտեի 2024 թվականի նոյեմբերի 5-ի N ՍԹ/18353-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:		
17	Կադրային բանկի համալրում	17.1 Համագործակցություն ոլորտային կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ, կրթական ծրագրերի վերանայում, լաբորատորիաների ստեղծում	ՀՀ տարբեր բուհերի (ԵՊՀ, ՃՇՀԱՀ, ՀԱԱՀ) ուսանողներ (բակալավրիատի ուսանողներ, մագիստրոսներ, ասպիրանտներ) արտադրական պրակտիկաների շրջանակում անցնում են պրակտիկա վարչության բաժիններում: Յուրաքանչյուր տարի շուրջ 250 ուսանողի ներկայացվում է մասնագիտական ոլորտների դերը և կարևորությունը, ինչպես նաև ժամանակակից հնարավորությունները: Համագործակցության շրջանակներում համատեղ վերանայվում են մասնագիատկան կրթական ծրագրերը, որոնք համապատասխանեցվում են ժամանակակից արտադրության չափանիշներին: Վարչության աշխատակիցները մասնակցել են 10-ից ավելի տարբեր միջազգային գիտաժողովներին, սեմինարներին, քննարկումների՝ այդ թվում առցանց, հանդես են եկել բովանդակային զեկույցներով:		